<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության
ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

08 փետրվարի 2018 թ.
Ժամը 12.00 թիվ՝ 4

Արձանագրություն

<ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/3> ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ ԳՊ/ԳԱՊ Ն. Գասպարյան
հանձնաժողովի անդամներ -
/հաշվապահ/ ԳՊ/ԳԱ Ն. Դավթյան
/դեղագործ/ ԳՊ/ԲԱ Ս. Անանյան
/համակարգչ. օպ./ ԳՊ/ԲԱ Օ. Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝
ԳՊ/Մհմ Հարություն Օհանյան

Հանձնաժողովի նիստին բացակայում էր
/դեղագետ/ ԳՊ/ԳԱ Մ. Թովմասյան

<< կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահ Ն. Գասպարյան

1. Գնման ընթացակարգի թիվ 3 արձանագրության մեջ տեղ գտած վրիպումների և դրանց ուղղման մասին

- Գնման ըթաակարգի թիվ 3 արձանագրությամբ վրիպման պատճառով 9-րդ չափաբաժնի մասով որպես 1-ին տեղ զբաղեցրած Մասնակից է ճանաչվել Ալֆա - Ֆարմ Իմպորտ ՓԲԸ-ն, սակայն նշված չափաբաժնի մասով նվազագույն գնի առաջարկ է ներկայացրել Նատալի Ֆարմ ՍՊԸ-ն, հաշվի առնելով դա գնահատող հանձնաժողովը որոշեց՝ դադարեցնել՝ 9-րդ չափաբաժնի մասով Ալֆա - Ֆարմ Իմպորտ ՓԲԸ-ին 1-ին տեղ իսկ Նատալի Ֆարմ ՍՊԸ-ին 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու որոշումը և կայացնել նոր որոշում՝ 9-րդ չափաբաժնի մասով Նատալի Ֆարմ ՍՊԸ-ին ճանաչել 1-ին իսկ Ալֆա - Ֆարմ Իմպորտ ՓԲԸ-ին 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից: Նաև հայտնում ենք, որ Նատալի Ֆարմ ՍՊԸ-ն 9-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը.
- Գնման ըթաակարգի թիվ 3 արձանագրությամբ վրիպման պատճառով 69-րդ չափաբաժնի մասով որպես՝

1-ին տեղ զբաղեցրած Մասնակից է ճանաչվել Ալֆա - Ֆարմ Իմպորտ ՓԲԸ-ն,
2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել է Նատալի Ֆարմ ՍՊԸ-ն
իսկ 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել է Հերմինե ֆարմեց ՍՊԸ-ն,

սակայն նշված չափաբաժնի մասով նվազագույն գնի առաջարկ է ներկայացրել Նատալի Ֆարմ ՍՊԸ-ն իսկ Հերմինե Ֆարմեց ՍՊԸ-ի առաջարկած գինը ավելի ցածր է քան Ալֆա - Ֆարմ Իմպորտ ՓԲԸ-ը, հաշվի առնելով դա գնահատող հանձնաժողովը որոշեց՝ դադարեցնել՝ 69-րդ չափաբաժնի մասով Ալֆա - Ֆարմ Իմպորտ ՓԲԸ-ին 1-ին, Նատալի Ֆարմ ՍՊԸ-ին 2-րդ և Հերմինե Ֆարմեց ՍՊԸ-ին 3-րդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու որոշումը և կայացնել նոր որոշում՝ 69-րդ չափաբաժնի մասով Նատալի Ֆարմ ՍՊԸ-ին ճանաչել 1-ին, Հերմինե Ֆարմեց ՍՊԸ-ին 2-րդ իսկ Ալֆա - Ֆարմ Իմպորտ ՓԲԸ-ին 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից: Նաև հայտնում ենք, որ Նատալի Ֆարմ ՍՊԸ-ն 69-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը

Ընդունել որոշում կողմ ***4 (չորս)***, դեմ ***0 (զրո)***

Գնման ընթացակարգի հրավերի պահանջներին Մասնակիցների ներկայացրած տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության մասին

- Գնման ընթացակարգի շրջանակներում Նատալի Ֆարմ ՍՊԸ-ի և Խաչպար ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերում հրավերի պահանջների նկատմամբ կան անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Նատալի Ֆարմ ՍՊԸ-ն 27-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն իր կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում ընդհանրապես բացակայում է 27-րդ չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի տվյալները.

Խաչպար ՍՊԸ-ն 21-րդ չափաբաժնում ներառված, գնման առարկա հանդիսացող ախտահանիչ նյութի համար առաջարկում է Ստերոքս անվանում ունեցող 2,7 տոկոս խտություն ունեցող նյութ, այնինչ գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով պահանջվում է 20 տոկոս խտություն ունեցող ախտահանիչ նյութ.

- Հաշվի առնելով Նատալի Ֆարմ ՍՊԸ-ի և Խաչպար ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրերում տեղ գտած անհամապատասխանությունները, հանձնաժողովը որոշեց՝

կասեցնել գնահատող հաձնաժողովի նիստը և հանձնարարել հանձնաժովի քարտուղարին ծանուցել Նատալի Ֆարմ ՍՊԸ-ին և Խաչպար ՍՊԸ-ին առաջարկելով, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք և էլեկտրոնային փոստի հասցեին՝ nco.gnumner@gmail.com, ուղարկելու միջոցով Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ ներկայացնել թվային ստորագրված, պատշաճ լրացված և հրավերի պահանջներին բավարարող տեխնիկական բնութագրեր: Տեխնիական բնութագրերը չներկայացնելու կամ հրավերի պահանջներին անհամապատասխան տեխնիկական բնութագրեր ներկայացնելու դեպքում Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համաձայն Նատալի Ֆարմ ՍՊԸ-ի և Խաչպար ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը նշված չափաբաժինների մասով ենթակա են մերժման.

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն պարբերությամբ սահմանված ծանուցումը ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին

Ընդունել որոշում կողմ ***4 (չորս)***, դեմ ***0 (զրո)***

Գնահատող հանձնաժողովի նախագահ.
/դեղատան վարիչ/ ԳՊ/ԳԱՊ Ն. Գասպարյան

հանձնաժողովի անդամներ -
/հաշվապահ/ ԳՊ/ԳԱ Ն. Դավթյան

/դեղագործ/ ԳՊ/ԲԱ Ս. Անանյան

/համակարգչ. օպ./ ԳՊ/ԲԱ Օ. Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ԳՊ/Միմ Հարություն Օհանյան